

## ՄԵԺ ՅՈՒՅԵԼԵԱՆՔ

Ազգերի, ժողովուրդների կեանքում մեծ տոներ, մեծ յորելեաններ շատ են տօնելի: Շատ ու բազմաթիւ են եղել նրանք մանաւանդ այն ազգերի մէջ, որոնք դարեւոր կուլտուրա, խոշոր անցեալ և աչքի գարնող հասարակական երևոյթներ ու ֆակտորներ են ունեցել:

Փոքր ազգերը գծրախտաբար գուրկ են եղել շատ-շուտ վայելելու այդ երջանիկ օրերի անուշութիւնը և հաղիւ է նրանց պատահում այդպիսի քաղցր բուպէներ:

Հայ ժողովուրդը, որ իր թէ անցեալով և թէ այժմեան կուլտուրայով պատկանում է փոքր ազգերի շարքին, իհարկէ պարծենալու և ինքն իրան երջանիկ զգալու առիթներ շաբիշ է ունեցել: Եւ եթէ այդպիսիներն էլ պատահել են, նա անկարող է եղել գնահատել նրանց ու արժանավայել կերպով տօնել, արտայայտել:

Այդպէս չեղան, օրինակ հայ տաւուրի գիւտի 1500 ամեակի նշանաւոր յորելեանը: Ի՞նչ արինք, ինչով անմահացրինք այդ այնքան էական նշանակութիւն ունեցող տօնը:

Այսօր, բարեբախտաբար, այդ մեծ տօնից հաղիւ 7—8 տարի անց, մեր առաջ ծառայել է ոչ պակաս մեծ ու վսեմ, նոյնքան հոյակապ և նոյնքան հայ ժողովրդի կուլտուրայի բարե-

բացման նպաստող մի երկրորդ նշանակալից տօն:

Դա հայ սպագրու թեան 400 ամեակի յորելեանական տօնն է:

Կրմբունենք մենք այս կարեւոր տօնի նշանակութիւնն ու նրա կատարած գերազանց կուլտուրական դերը հայ կեանքի մէջ:

Առայժմ թւում է, թէ հայ ժողովրդի իմացական տարրը ուղում է շարժել, ուղում է արտայայտել և այն էլ խոշոր շափերով:

Հրատարակչական բնկ. հրաւերով արդէն գումարւել են կրկնակի ժողովներ և որոշւել է, ըստ հնարաւորութեան, փառաւոր կերպով տօնել հայ սպագրութեան 400-ամեակը:

Ուրախայի և շնորհաւորանքի արժանի է սկսւած գործը, ցանկանում ենք կատարեալ յաջողութիւն:

Անշուշտ, ամեն նոր սկսւող գործում կարող են թլուրիմացութիւններ պատահել: Պատահեց նաև այս գործում: Հայ իրականութեան մէջ յայտնի հայկաբան յարգելի Ս. Մալխասեան փորձեց 1912 թ. կատարւելիք յորելեանը յետաձգել տալ 1913 թ., պատճառաբանելով, իհարկէ, այս գիտական-պատմական ճշտութիւն չէ ներկայացնում 1912-ը:

Պ. Մալխասեան վկայութեան հրաւիրեց Վեննայի ու Վենետիկի Մխթարեան հայրերին:

Բարեբախտաբար, Վեննայի Մի-  
թարեան հայրերից Հ. Ալիինեան, շտա-  
պեց լուծել այդ թիւրիմացութիւնը  
և այսօր 1912 թ. է ճշմարտագոյն  
այն թւականը, երբ լրանում է Հայ  
ուպագրութեան 400-ամեակը:

Այս մասին այլևս ոչ մի կասկած  
չէ կարող լինել և քաղցր է մեզ յու-  
սալ, որ վաստի այսպէս արագորէն  
ճշտելը անթիթ պիտի ընծայէ հայ ին-  
տելիգենցիայի բոլոր խաւերին, դալ  
համախմբել յորեւեանական հանգէսի  
շուքը և աշխատել միահամուռ պ-  
ժերով առօր-վառօր նրան տօնել:

Բայց ի՞նչ է այս տօնը, ինչպէս է  
կայանում նրա խորհուրդը, նրա մե-  
ծութիւնը:

Շատ է մեծ նա. բազմաթիւ են  
նրա տւած օգուտները, շատ ենք  
պարտական մենք նրան:

Ինչի՞ նման կլինէր մեր կեանքը  
առանց այդ շնարհարհիկ գիւտի իւ-  
րացման. չէ՞ որ առանց դրան մենք  
բարբարոսների շարքումը կդասէինք  
ու պիտի նմանէինք այն անապատա-  
կանին, որ թէև երկրագնդի վրայ,  
սակայն կտրւած մարդկային ընկե-  
րութիւնից՝ լուր բուսական կեանքն  
է քարշ տալիս. չէ՞ որ զբանով մենք  
պիտի գրկէինք այն մեծ գէնքից, որ  
կոչուում է զիտրիւն, դասիարա-  
կութիւն, և որ առանց նրան այժմ  
ու մանաւանդ սրանից յետոյ ոչ մի  
մարդ, ոչ մի ազգ գոյութիւն ունե-  
նալ չի կարող. գատապարտւած է  
յաւիտենական կորստի, մահւան:

Այո, այս այսպէս է, պէտք է  
խորանալ, պիտի բմբնել տպագրա-  
կան գիւտի ընդհանրապէս և հայկա-

կան տպագրութեան մանաւորապէս  
տւած ու տալիք մեծ, շատ մեծ,  
անհամեմատելի օգուտները:

Կլինէին դպրոցներ, կկանգնէին  
գիտութեան պէս-պէս տաճարներ,  
կուսենայինք զբքեր ու գրողներ,  
լրագրներ ու լրագրողներ, բազմա-  
թիւ ուսուցիչներ — վարժուհիներ,  
բժիշկներ, փաստաբաններ և վերջա-  
պէս գիրք ու թերթ կարդացողներ:  
Ոչ՞, եթէ չլինէր Գուտտենբերգի  
գիւտը:

Ուրեմն, այդ բոլոր տեսայնոր  
մենք պարտական ենք նախ անմահ  
Գուտտենբերգին, ապա և հայ ազգի  
այն վաստակաւոր զուակներին, որ  
որոնք ըմբռնելով այդ գիւտի հոգին  
ու միտքը՝ մացրին նրան մեր կեանքը  
և այդպիսով նարաւորութիւն տւին  
մեզ հոգեպէս, բարոյապէս ու տըն-  
տեսապէս կապելու մարդկային այն  
բոլոր տարրերին, որոնք արագու-  
թեամբ սլանում են դէպ առաջ:

Ահա թէ ինչ է հայ տպագրութեան  
400-ամեակի տօնը. ահա թէ որքան  
է նա վսեմ ու հոյակապ:

Ու այս հոյակապ տօնի պահուն է,  
որ մենք պիտի ցոյց տանք մեր  
կուլտուրական մակարդակի աստի-  
ճանը, պիտի վեր հանենք մեր հոգու,  
մտքի ու սրտի մեծութիւնն ու վե-  
հութիւնը:

Ուրեմն, թող հայ ժողովուրդը իր  
բազմազան ու բազմապիսի դասա-  
կարգերով, խաւերով հրապարակ  
գայ, մէջ բերի բարոյական ու նիւ-  
թական զոնդութեան աւատութիւն:

Սե քանի որ ասպարէզ է նետւած  
գրական ֆոնդը, մի ֆոնդ, որ պիտի

աջակցէ հայ գրողներին և հայ գրա-  
կանութեան զարգացման գործին,  
ապա ուրեմն փատահ պիտի լինել, որ  
այդ գաղափարը ընդհանուր համա-  
կրութիւն պիտ գտնէ:

Ճանաչենք մեր պարտականու-  
թիւնը. զնահատենք մեր մտաւոր  
փաստակաւորներին:

Գ. ՂԱՏԴԱՆԵԱՆ